

ԼՈՆԴՈՆԻ ՄԵՐՍԵՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ. Վ. ԲԵԼՅԱՉԵ-ԽԻՆԻԿԱՉԵ (Բ. Բաբուն)

15-16-րդ դդ. Լոնդոնում մահուղի արտահանմամբ զբաղվող ամենահարուստ և առաջատար կորպորացիաներից էր մերսերների (գործվածքեղենի վաճառականներ) միությունը: Այդ է վկայում «Նյուրոլի գիրքը» (անվանումը պայմանական է), որում զետեղված են մերսերների միության խորհրդի արձանագրությունները: Նրանց առաջնությունն ընդունվում էր նույնիսկ պաշտոնապես: Օրինակ՝ 1411 թ. մերսերների և նպարավաճառների միջև ծագեցին տարածայնություններ այն պատճառով, որ եկեղեցական արարողության ժամանակ սուրբ Պողոսի եկեղեցում նպարավաճառներն «ապօրինաբար» գրավել էին մերսերների տեղը: Այդ առիթով քաղաքապետը հայտարարեց, որ բոլոր ընդհանուր ժողովների, դատավարությունների ժամանակ, երբ քաղաքապետը մերսերներից է, նրանք եկեղեցում պետք է զբաղեցնեն առաջին տեղերը և կոչվեն առաջիններ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մերսերներն առավելություն ունեին Լոնդոնի այլ միությունների նկատմամբ:

Բնավ պատահական չէ, որ մերսերների հանրահայտ հիմնում ասվում էր. «Of all the trade, that London grace, we are first in time and Place» (Լոնդոնը զարդարող բոլոր մասնագիտություններից մենք առաջիններից ենք՝ թե ըստ ժամանակի և թե ըստ դիրքի)¹: «Նյուրոլի գիրքը» հաստատում է նույնը:

1466 թ., երբ Անգլիայի թագավոր Հենրիխ 7-րդը Լոնդոնի քաղաքային խորհրդից պահանջեց վճարել 4 հազար ֆունտ-ստերլինգի հասնող հերթական հարկը, այն քաշիվեց Լոնդոնի 76 առևտրական և արհեստավորական միությունների միջև: Մյուսներից ավելի շատ վճարեցին 12 խոշոր առևտրական միություններ: Նրանց մեջ առաջին տեղում էին մերսերները, որոնք վճարեցին 740 ֆունտ, այսինքն՝ ամբողջ հարկի 18,5 տոկոսը:

Է. Կարուս Ուիլսոնի կարծիքով մերսերներն իրենցից ներկայացնում էին այն կենտրոնաձիգ առանցքը, որը դեպի իրեն էր ձգում մնացած միությունները՝ գերիշխելով նրանց վրա²: Եվ իսկապես, բոլոր հանձնաժողովներում և պատվիրակություններում, որոնք Լոնդոնի վաճառականներն ուղարկում էին թագավորի և նրա խորհրդի մոտ, գերակշռում էին այդ միության անդամները: Այսպես, օրինակ, Լոնդոնի քաղաքապետի 1486 թ. մարտի 22-ի կայրագրությամբ օլդերմենները կարող էին ընտրել Նիդեռլանդներում բնակվող կառավարչի երկու տեղակալ: Տեղակալներից մեկը պետք է լիներ մերսերներից, իսկ մյուսը՝ Լոնդոնի որևէ այլ միությունից: Այդ տեղակալների միջոցով վաճառականներն անդրծովյան երկրներում ճանապարհորդող վաճառականներից ստանում էին նամակներ և ուղարկում պատասխան նամակներ Լոնդոնից³:

Քանի որ Հենրիխ 7-րդ թագավորը պատրաստվում էր Կալե քաղաքում Հոմի կայսեր հետ բանակցություններ սկսել փոխհարաբերությունների վերականգնման և բարելավման շուրջ, ըստ այդմ 1486 թ. արկածախնդիր-վաճառականների ընդհանուր ժողովում որոշվեց, որ բանակցություններից (առևտրային հարցերով - Հ. Բ.) մասնակցելու համար անհրաժեշտ է ընկերությունից ներկայացուցիչներ ուղարկել լորդերի պալատ: Համաձայն որոշման՝ արկածախնդիր-վաճառա-

¹ E. W. Bradbrook, The worshopful company of mercer's of the city of London and some of its eniment members, London, 1889.
² Sh'u Carrus-Wilson, The Origin and Early Development of the Merchant Adventurers organisation in London as shown in their own medieval records, Ec. H. R., vol. 4, N 2, 1933:
³ Sh'u նույն տեղը, էջ 162:

կաննների ընկերության մեջ մտնող մյուս միություններն ուղարկեցին մեկական, իսկ մերսերները՝ երկու ներկայացուցիչ⁴ :

15-րդ դարավերջի և 16-րդ դարասկզբի արկածախնդիր-վաճառականների ընկերության հանրահայտ դեմքերից էին Ջոն Էմվելը, Ջոն Մելտոնը, Ջոն Բլիֆորդը, Ջոն Հյուվետերը, Թոմաս Մեյները և՝ Ռիչարդ Գրեշեմը: «Նյուբորոյի գիրքը» հաստատում է, որ արկածախնդիր-վաճառականների ընկերության կառավարիչների մեծ մասը մերսերներ էին:

Մերսերներն ընտրվում էին ինչպես քաղաքապետի, այնպես էլ օլդերմենների պաշտոններում: 15-րդ դարում ընտրված 20 օլդերմեններից 7-ը մերսերներ էին⁵, իսկ 16-րդ դարում լրող քաղաքապետի պաշտոնում 24 անգամ ընտրվել են մերսերներ, որոնցից 17-ը մահուտի վաճառականների միությունից էին, իսկ մնացածը՝ այլ միություններից⁶:

Մերսերների միությունը գլխավորում էր Անգլիայի մայրաքաղաքի քաղաքային ինքնավարությունը: Փաստորեն այդ ինքնավարությունը գտնվում էր հարուստ մերսերների ձեռքին: Օլդերմենի պաշտոնում ընտրվելու համար մերսերին անհրաժեշտ էր ունենալ 100 ֆունտ ստերլինգից ոչ պակաս դրամագույն⁷:

Ենթադրում ենք, որ մերսերների այս առավելությունը պայմանավորված էր այն բանով, որ նրանց գիլդիան (վաճառականների միություն) ընդգրկում էր Լոնդոնի ամենահարուստ վաճառականներին, քանզի մերսերները մայրաքաղաքի ամենահարուստ միություններից էին: Ահա թե ինչու քաղաքային ինքնավարության բոլոր ոլորտներում մերսերները մեծ ազդեցություն ունեին:

1517 թվականին արկածախնդիր-վաճառականները որոշեցին իրենց փողերը պահել մերսերների միության ավագների մոտ: Կառավարիչն ընկերության հաշվին պետք է ձեռք բերեր երկաթե դրամարկղ, որը պետք է պահ տրվեր մերսերների ավագներին: Արկղը պետք է ունենար երեք բանալի, որոնցից մեկը պետք է լիներ մերսերների ավագի մոտ, մյուսը՝ նպարավաճառների ավագի, երրորդը՝ մահուտ վաճառողների ավագի⁸:

Մերսերների միության և արկածախնդիր-վաճառականների ընկերության փոխադարձ կապը այնքան սերտ էր, որ 1526 թ. երկու միավորումների արձանագրությունները գրանցվում էին միևնույն գրքում:

Մերսերների նավերը, որոնք դուրս էին գալիս առևտրի անդրծովյան երկրներ, առավելություններ ունեին մյուս նավերի համեմատությամբ:

Այդ է վկայում 1475 թ. Նիդեռլանդների արկածախնդիր-վաճառականների ընկերության կառավարիչ Պիկերինգհն մերսերների ուղարկած նամակը, որում ասվում է, որ կնքված պայմանագրի համաձայն՝ այն նավերը, որոնցից օգտվում են իրենք՝ մերսերների միությունը, իսկ մյուս միություններից՝ մահուտ վաճառողները, նպարավաճառները և արդուզարդ վաճառողները, պետք է ուղարկվեն Չեյանդիայում կայանալիք Բամասկիի (աշնանային) տոնավաճառ: Մերսերների յոթ նավերը պետք է լավ բեռնավորված լինեին վաճառվող ապրանքներով⁹: Նամակում նշվում է նաև, որ մյուս միությունների նավերը Չեյանդիայում կբեռնավորվեն միայն այն բանից հետո, երբ բեռնավորված կլինեն մերսերների հիշյալ նավերը: Ըստ որում, մերսերների «Մարգարետ Սկոտեր» և «Մայրը Թոմսոն» անուններով նավերից յուրաքանչյուրի վրա կար 26-ական, իսկ «Գաբրիել Թեյք» կոչվող նավի վրա՝ 30 զինյալ մարդ և այլն:

Այլ խոսքով ասած՝ մերսերների ապրանքները փոխադրող նավերը լավագույնս ապահովված էին զինված պահակախմբով՝ ի տարբերություն մյուս միությունների նավերի: Այստեղից պարզ երևում է, թե որքան թանկ էր նստում մերսերների վրա նավ վարձելը, զինված պահակախմբով ապահովելը և ծափ մյուս ափ տեղափոխելը:

Ամենայն հավանականությամբ մյուս վաճառականների համեմատ, նրանք վաճառքի էին տանում մեծ քանակությամբ ապրանքներ, որը նրանց վրա բավականին թանկ էր նստում: Ինքնին հասկանալի է, որ մերսերները չէին կարողանա կատարել այդ ծախսերը, եթե ապահովված չլինեին մեծ միջոցներով:

⁴ Տե՛ս «The Acts of Court of the Mercer's Company (1453-1528) w-th on introduction by L. Lyell assisted by F. D. Watday», Cambridge, 1936, էջ 294:

⁵ Տե՛ս S. Thrupp, The merchant class of medieval London, Chicago, 1948, էջ 321-376:

⁶ Տե՛ս B. B. Մրոուսթ, Очерки по истории Англии XVI в., Л., 1957, էջ 52-53:

⁷ Տե՛ս M. A. Dobb, Studies in the development of capitalism, L., 1954, էջ 106:

⁸ Տե՛ս «The Acts of Court of the Mercer's Company (1453-1528)...», էջ 454:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 67:

Հարկավ նրանք ամեն կերպ ջանում էին կրճատել նավերի վարձակալման ծախսերը, ուստի լուրջ քայլեր էին կատարում նաև սեփական նավեր ձեռք բերելու ուղղությամբ: Բանն այն է, որ նավերի վարձակալման հարցի շուրջ մերսերների և այլ միավորումների միջև հաճախ ծագում էին անհամաձայնություններ և վիճաբանություններ: Այդ ամենից խուսափելու և առևտրական ծախսերը կրճատելու նպատակով 1492 թ. Լոնդոնի արկածախնդիր-վաճառականների ժողովում մերսերները պատրաստակամություն հայտնեցին որոշակի թվով սեփական նավեր ձեռք բերելու մասին: Մակայն արկածախնդիր-վաճառականների միությունը չցանկացավ տալ իր համաձայնությունը: Այդ ժամանակ մերսերները որոշեցին. այդուհետև նավեր կվարձեն միայն իրենց համար և թույլ չեն տա այլ միությունների վաճառականներին այդ նավերով բեռ տեղափոխել: Այսուհանդերձ թույլատրվում էր մյուս միություններից բացառություն անել միայն այն վաճառականներին, որոնք թույլտվություն կստանային վճարելու մերսերների հետ միասին, եթե համատեղ նավարկությունը մերսերների համար լիներ շահավետ¹⁰:

Հաճախ արկածախնդիրները թագավորական պալատից արտոնություններ էին ստանում կաշառքի և նվերների միջոցով: Այս դեպքերում ծախսերի համարյա կեսը կրում էին մերսերները:

Ինչպես հայտնի է, Էդուարդ 4-րդ թագավորի օրոք, ըստ իրենց ունեցած բեռի և խմելու ջրի պաշարի, արկածախնդիր-վաճառականները վճարում էին սուբսիդիա (դրամական նպաստ), որը հավաքում էին այսպես կոչված հսկիչները: Էդուարդ 4-րդի մահից հետո 1463 թ. ապրիլի 9-ից իրականացնող հետևողականորեն շարունակ պահանջում էին վճարել սուբսիդիան, այնպես չէր թույլատրվում բեռի արտահանումը: Արկածախնդիր-վաճառականները 1483 թ. մայիսի 15-ին կայացած ընդհանուր ժողովում որոշեցին այլևս չվճարել այն, այլ ներկայացնել խնդրագիր պետության կառավարչին՝ լորդ հովանավորին, թագավորական խորհրդի անդամներին, որպեսզի այլևս իրենցից չգանձեն վերը նշված մուծումները: Ընդունվեց որոշում, որ այդ գործի համար տրամադրված ծախսերի կեսը (այսինքն՝ թագավորական խորհրդի համար նախատեսված նվերների և կաշառքի) իրենց վրա պետք է վերցնեն մերսերները, իսկ մյուս կեսը պետք է պահովեն արկածախնդիր-վաճառականների ընկերության մեջ մտնող մնացած միությունները միասին վերցրած:

Կաշառքը և նվերներն ունեցան իրենց ներգործությունը: Լորդ հովանավորը (ինչպես հայտնի է, Էդուարդ 4-րդի հովանավորն էր նրա կրտսեր եղբայրը, իսկ անչափահաս Էդուարդ 5-րդ թագավորինը՝ Ռիչարդ Գլուստերը, որը կարճ ժամանակ անց դարձավ թագավոր՝ Ռիչարդ 6-րդ անունով) վճեց, որ պառլամենտը Էդուարդ 4-րդ թագավորին թույլ տա բեռի յուրաքանչյուր տոննայից և խմելու ջրի պաշարից սուբսիդիա գանձել միայն իր կենդանության օրոք: Իսկ դա նշանակում էր, որ նրա մահից հետո պառլամենտի այդ արձանագրությունը կկորցնեի իր ուժը: Եվ իսկպես, Էդուարդ 4-րդ թագավորի մահվանից անմիջապես հետո սուբսիդիա հավաքող հսկիչներին հրաման տրվեց դադարեցնելու գանձումը, և անգլիական վաճառականները հնարավորություն ստացան անարգել կերպով արտահանելու իրենց ապրանքը¹¹, ինչպես իրենք են ցանկանում:

Դժվար չէ տեսնել, որ վաճառականները թագավորական խորհրդի կողմից որևէ իրավունք կամ արտոնություն ստանալու համար փաստորեն կանգ չէին առնում և ոչ մի միջոցի առաջ՝ կաշառք, նվիրատվություն և այլն և բոլոր դեպքերում կարողանում էին հասնել իրենց նպատակին:

Բնականաբար նրանք ջանում էին առավելագույնս օգտվել թանկ վճարված արտոնությունից և կարճ ժամանակում կարողանում էին ոչ միայն վերադարձնել կորցրածը, այլև բազմապատիկ անգամ ավելի մեծ շահ ստանալ: Դրանով պետք է բացատրել այն իրողությունը, որ 15-րդ դարի վերջերին արդեն մերսերների միությունը այնքան հարուստ էր, որ պարտքով փողեր էր տալիս մայրաքաղաքի արկածախնդիր-վաճառականներին: Օրինակ, 1497 թ. մերսերների ավագները կարողացան շահել արկածախնդիր-վաճառականների ընկերության դեմ հարուցած դատական գործը՝ ծախսելով 300 ֆունտ ստերլինգ¹²:

Կարծում ենք՝ այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ այդ ժամանակ ոչ միայն լոնդոնյան խմբում, այլև ընդհանրապես Անգլիայի արկածախնդիր-վաճառականների շարքում մերսերներն ունեին առաջատար դիրք ու իշխանություն, որը պայմանավորված էր նախ և առաջ նրանց ունեցած տնտեսական հզորությամբ:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 227:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 149-153:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 637-638:

И. В. Белтадзе-Хиникадзе (г. Батуми) - Из истории Лондонской мерсерской корпорации. - В XV-XVI столетиях среди корпораций Лондона, участвовавших в экспорте сукна, мерсеры (торговцы тканьями) были самыми богатыми и ведущими. Об этом явно свидетельствует "Книга Ньюболда" (так мы именовали условно источник), содержащий акты совета корпораций мерсеров.

В 1488 году, когда король Генрих VII потребовал от городского совета Лондона очередной налог в 4 тысячи фунтов стерлингов, больше других уплатили 12 крупных торговых корпораций и среди них на первом месте были мерсеры.

Мерсеры были избираемы часто на должности мэров и олдерменов в течение XV-XVI веков.

Корпорация мерсеров была настолько богата, что давала займы деньги купцам-авантюристам столицы.

Мерсеры достигли господствующего положения среди корпораций столицы, столичные же купцы добились преимуществ среди купцов-авантюристов всей страны. Полагаясь, раз в Лондонской группе мерсеры первенствовали, поскольку они, очевидно, играли ведущую роль и среди купцов-авантюристов Англии, т. е. лондонская корпорация мерсеров обладала ведущей позицией не только среди Лондонских авантюристов, но и среди авантюристов всей Англии.